ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 7554 ***30 օգոստոս 2024թ.***

<<ՍՏՐՈՅ ՇԻՆ 22>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՎԱՂԻՆԱԿ ԱՄԻՐՅԱՆԻՆ
/Հասցե՝ ք. Երևան, Ավան 8փ., 12տ. 0063/

Հարգելի պարոն Ամիրյան,

Մասիսի համայնքապետարանի և <<Ստրոյ Շին 22>> ՍՊԸ-ի միջև 02.06.2023թ. կնքվել է ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/8 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի շրջանակներում ընկերությունը պարտավորվել էր ֆինանսական միջոցների առկայության և դրանց հիման վրա կողմերի միջև համաձայնագրի կնքման միջոցով իրականացնել Մասիսի համայնքապետարանի 3-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների հիմնանորոգման աշխատանքները: Պայմանագրի 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ էր սահմանվել ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օր: Համապատասխան համաձայնագիրը կնքվել էր 27.06.2023թ.-ին և նույն օրը մտել ուժի մեջ:

Մինչ օրս Ձեր ընկերության կողմից իրականացվել են բացառապես 3-րդ հարկի սանհանգույցների նորոգման, իսկ 4-րդ հարկի սանհանգույցներում՝ մասնակի քանդման աշխատանքներ՝ չնայած Պատվիրատուի և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից բազմիցս ներկայացված գրավոր և բանավոր զգուշացումներին:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետն արդեն իսկ լրացել է (ներառյալ երկարաձգված ժամկետը), սակայն աշխատանքներ չեն իրականացվում՝ պատճառելով լրացուցիչ անհարմարություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Մասիսի համայնքապետարանի և <<Ստրոյ Շին 22>> ՍՊԸ-ի միջև 02.06.2023թ. կնքված ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/8 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետի ա) և բ) պարբերությունները, 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի դրույթները՝ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատու կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում Ձեր ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ **576,451 /հինգ հարյուր յոթանասունվեց հազար չորս հարյուր հիսունմեկ/** ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ **384,300 /երեք հարյուր ութանասունչորս հազար երեք հարյուր/** ՀՀ դրամի չափով, ինչպես նաև պայմանագրի 6-րդ կետով նախատեսված տույժերը և տուգանքը վճարել Պատվիրատուի 900 435 002 101 հաշվեհամարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում պայմանագրի և որակավորման ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է բնօրինակով ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին՝ 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դավիթ Համբարձումյան

Կատ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան